


Ա. ՄԵԼԻՔՍԵՐՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ  
ԺԱՏՐՈՆԸ



ՊԵՏԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

JUN 2013

7103

02 NOV

111

88311



92(47.92S)

Մ-51 Ս. ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ

Այ

ՅԵՐԵՎԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ



Պատ. Խմբագրի Յե. Զարենց  
Տեխ. Խմբագրու Տ. Խաչվանքյան  
Սրբագրի Վ. Տեղոյան

Գևառաստի ապարան-  
Գլաւլու Հ 8293 թ)  
Պատ. Վեր Հ 2003  
Հրատ. Հ 2:79  
Տեղադ 1000.



## ՄՈՒՏՔԻՑ ԱՌԱՋ

Թատրոնը բարդ որդանիզմ եւ Շատ դժվար եւ մեր մտագրությունից հեռու՝ նրա մասին ալստեղ սպառիչ խոսք ասել: Հեղինակի գրությունն առավելապես ծանրանում եւ այն ժամանակ, չերր նրա մեջ միտք եւ հղանում գրելու Խորհրդային թատրոնի, մասնավորապես Յերևանի առաջին Պետական Կարմրադրոշ թատրոնի մասին Խորհրդային թատրոնը, ներկա դեպքում մեր Պետական Կարմրադրոշ թատրոնը բուրժուականի համեմատությամբ ունի՝ այլ ատրիբուտների հետ միասին՝ նաև բարձրորակ ըովանդակություն: Այդ պարագան նկատի առնելով՝ մենք մազաչափ անզամ հավակնություն չունենք, թերեւ՝ անձնապես ի վիճակի չեւ չենք լինի լրիդ կերպով բնութագրելու Յերեվանի Պետական առաջին Կարմրադրոշ թատրոնը, վոր իր գոյուրյան տանամյակը քոյլից 1932 թ նունիվարի 25-ին:

Այս մեծանշանակ ու խորաբովանդակ տասնամյակը հրամայական պահանջ եւ դնում լրջմիտ ու խնամոտ ուսումնասիրության նյութ դարձնել այն: Այդ պատճառով, մենք դժվար, բայց հաճելի այդ պարտականությունը կհանձնենք մանրակրկիտ ու քրտաջան թատերական պատմարանին և խստությամբ կպահանջենք ըստ արժանույն վեր հանելու, զնահատելու, հալ թատրոնի պատմության պայծառ ու արգասափոր եջը՝ Պետական առաջին թատրոնի գարգացման տասնամյա ուղին:

Մենք միաևն ցանկություն ունենք հոբելյարի հասցելին խոսք ասել ու խորոց սրտեա և տալ նրա պատմուրյան մի հանի Ֆրազմենները:

ԲԱԿԱՐԱ ՊԼՅՈՒՄ ԾԽԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ՝ ՏԻԶԵՆԱՍՈՒՀԵՆԻ ՀՈՎԱՆՈՒ ՏԱԿ

Յերեանի առաջին Պետական թատրոնի ներկայիս շենքը՝ նախկին Յերեանյան նահանգի «նորին մեծության ամենահաջատարիմ ծառա» նահանդապետ Տիգենճ առևզենի ժամանակը հայտնի է իր իրեւ հասարակական ակումբ։ Յերեանի մեծատունները, աստիճանավորները, խանութպանները և քաղքինի մտավորական տարրերն իրենաժամկեց մինչև լուսածաղ տևող «Հանգիստը» գտնում ենին այնտեղ, մշտնջենական կանաչ սեղանների շուրջը և առետրական, հասարական բնույթի ունեցող կոմքինացիաներին ու սոլիտեր — քաղքենու բամբասանքներին հատկացված զրուցարաններում։ Ակումբի ամենորթա ծրագրի մեջ «պատգամոր» տեղ բանող պըեֆերանսի, բակարայի, զանազան ատորաքարշ կոմքինացիաների ու մալիսինացիաների, մանավանդ ֆարսնախսի ու ճոխ կողքին՝ յերեմի զրագում ենին նացիոնալիստական զգացյունքները տեղահանող յերեկոներ, վորոնց նախաձեռնողներն ենին հանդիսանում վարժապետական և նորաբարձական և «ազգանվեր սիրատուն կանանց» ծխական ներկայացուցիչները։ Այդ յերեկոները և սիրողական ներկայացուներն ակումբի սեղոնի զարգերն ենին։ Վարդանանց տօնի յերեկոների խած հիմտերիկ հանդիսատեսի արցունքներն ընդունակ չենին խռովելու Տիգենճառութենի անդորրը, կազմակերպիչներն յերեկոները զուրս չենին բերում պատշաճավորության սահմաններից։ «Շուկան» որա կարիքը բնավ չեր զգում։ Տիգենճառութենի և նրա զործակալների փութը չեր նույնիսկ «Ճի բաժակ ջրի մեջ փոթորիկ բարձրացնող հեղափոխականների» ամենորլու ներկայությունն ակումբի ներսում, վորովհետև նրանք այնտեղ դիսնանս չենին մտցնում։

Հասարակական ակումբի վարչությունը դյուրությամբ կարողանում եր «սուրբ Ժայր Տաճարի հովիլի և կալսկը դաշինքն» ավելի ամրապնդել։

Ահա այդ ժամանակները, Արարատյան լախաճավար դաշտի հորիզոնում, տարափոխիկ թոշունների նման յերեւմ ենին Անդրկովկասի խոշոր քաղաքներից Յերեան այցի յեկած դերասական խմբեր, վորոնք աշխուժություն ենին մտցնում անգրդով ու տաղտուկ քաղաքում և անախորժ տրամադրություն պատճառում Տիգենճառութենի հարբան ու հնամուլ ցենզորը։

— Կասկածելի տարրեր են այս լեկովոր հալ գերասանները, — մըթմըթում եր քթի տակ ցենզորը։

— Շեքսպիրը հրեա լի, ուրիման անբարեհուս ե, խռովարկու և թագավորատյաց։ Յնս թուլլ չեմ տա նրան ոգտվելու իմ իրավասությունից։

Դերասանը, տեսնելով, վոր «Համլետ» — ներկայացման թուլավությունը ձախողանքի լի յենթարկում, սկսում եր ցեռանդով համոզել ցենզորին, վոր «Համլետը» և «Ոթելլու» Շեքսպիրինը չեն, այլ կայսրության իբրախտահատուց հպատակ կադիսի ամսանքը և Մասկենակինը։ Իսկ Շեքսպիրն այդ յերկերի ոտար լեզուների թարգմանիչն ու։

Թուլավորվում եր Աֆիշներում գրված եր լինում — «Համլետ», հեղինակություն Խան — Մասկենակինի։

Զանասեր ցենզորի գրչի հարվածով Շեքսպիրը զրկվել եր հեղինակի իրավունքից ու վարչիվել ափիշներից։

Հասարակական ակումբի անդամների մեծ մասը գավառացիան գիտակցությամբ և «բարձր կուլտուրա» — լին հաղորդագիր լինելու չափանիշով եր գիմավորում գերասանների խաղը... շարունակելով նստուկները չբարձրացնել թղթախաղի կանաչ և լոտովի յերկարավուն սեղանների շուրջը շարված աթոռներից։ Միայն հարսնաեսի ու փեսատեսի արարողությունն եր, վոր զրուցարանից թատերասրան եր փոխադրվում։

Սակայն անաչառ չենք լինի, յեթե մոռացության տանք մտավորականության այն շերտը, վոր սիրում եր «մայրաքաղաքացին մաներայով» մտենալ յեկուր դերասաններին և նրանց խաղին, նույնիսկ պատրաստ հոչակ վայելող դերասանուներին «կառքին լծիւլու» (մայրաքաղաքացին թատերամոլների նախկին սովորություններից), յեթե փոքրիկ քաղաքում... անհարաժ միներ։

Թատերասրանի վերջին կարգերը և պատշաճը գրավում ենին նաև ժողովրդական ստորին խավիրը, վորոնք իրենց անկաշառ զգացմունքներն արտահատում ելին անզուսպ պոտթկումերով։ Թատրոնի կենդանի նյարդերի հյուսքը կազմող այդ հանդիսականներն, իրենց զրպանի սուզ միջոցները չխնայելով եյին սրահի ծայրամատերը ուսմապահ լուս կողմի կլանքը գիտելու, սրբելու, ատելու և ուսանելու։ Նրանք իրենց ալեքոծվող սրտից բացի — գերասաններին վոչինչ չունելին տալու։ Յորը իշնում եր թատերախաղի վերջին վարագուրը, նրանք

խախտում ելին ակումբում որինականացված ետիկետները՝ ի պատիվ գերակատարների՝ սրահի մեջ բարձրացնելով ուրախության մի դղրդյուն։ Թատրոնը լցվում եր բացականչություններով, վորոտընդուս ծափերով և դեպի գերասանները թռչող գլմարկների յերաժողով<sup>\*)</sup>։

Են զորն իզուր եր մտահոգվում պաշտոնական ալիք սիրուց, վորովհետև գերասանները հեռանում ելին քաղաքից ծանր տրամադրություններով համակված,

#### «ՀԳԱՅԻՆ ՄԵԿԵՆԱՍՆԵՐԸ» ՅԵՎ ՏԱՏԱԿՈՏ ՑԱՆԱՊՈՐՉԸ

Դերասանական խմբերն Անդրկովկասլան կենտրոններից սովորաբար գավառներն ելին մեկնում 4-5 ամիս տևող ձմեռաշին սեղոններից հետո։ Ալիք ուղեկորությունները բոլոր գեպքերում կատարվում ելին իրենց իսկ նախաձեռնությամբ։ Յիթք «աստղի» համբավին չարժանացած գերասանը բախտ եր ունենում մտնելու կետրոնական քաղաքներում գործող «Հայ Դրամատիկ Ընկերության» խմբերի կազմի մեջ (ձմեռալին թատերաշրջանում աշխատելու համար), առաջին գործն եր լինում՝ գալիք գաստրոլյային ուղեկորություններին իր մասնակցությունն ապահովել։ Այլա գլխավորը։ Իսկ յերկրորդը՝ գերասանի արժանիքները գնահատելու յուրատեսակ մի գերարերմունք գոյություն ուներ, ով՝ տարին 12 ամիս չեր ոգտագործվում և լայն խավերի կողմից չեր ճանաչվում, նա «Հայ Դրամատիկ Ընկերության» աշխան մեծ գին չուներ։ Նրանց կողմից նա վարձվում եր եժան գնով։ Գնահատության այս ձևը չպիտի շփոթել գերասանի կոչում ձեռք բե, ելու այն չափանիշին, վորը գոյություն ուներ Հնդկաստանում։ Դերասան կարող եր լինել այն մարդը, ով, ասենք, անկ մետք և ալսքան սանտիսետը հասակ ուներ։ Վոչ պակաս, վոչ ավել։ Այս մոակցումը՝ «գեղեցկագիտական և տարածական բովանդակություն» ուներ, միսչեռ «Հայ Դրամատիկ Ընկերության» մոտեցումը՝ տնտեսական աստառ, այն ե՛ աշխատավորական եժան ձեռք վարձել։ Գնահատության այս ձևը չպիտի շափից ավելի փիրավորում եր գերասանի պրոֆեսիոնալ ինքնասիրությունն և ստիպում

<sup>\*)</sup> Յերեքանում գերասաններն ամելի շատ ներկայացություններ ելին տալիս նախկին Զանգովառանի թատրոնի շենքում (ներկայիս «Կարմը Բանակի Տուն»)։ Մասնաւոր հեղուակի յերաժողով։

Մասնաւոր հեղուակի

կրապարակում շատ և շուտ լերեալ Սակայն, կրկնում ենք, զըլի խավորը՝ նյութական անապահովության (7-8 ամիս տևող) յերկուպն եր, վոր հարկադրում՝ եր նրանց տասնյակ տարիներ, առանց հանգստանալու սիզիֆիան աշխատանք կ ստարել։ Կարծելով, վոր գավառից՝ գավառ, քաղաքից՝ քաղաք յերբեմն նույնիսկ գյուղից՝ գյուղ կատարվող թափառումները միշտ ել նյութական ու բարուական հաջողություններ ելին բերում, իրականության գեմ գնացած կինենք։ Էսդհակառակը՝ տարվա ընթացքում կագմած հաշվեկշիռը զգալի մասով վերջանում եր ձանրգական քնների պասսիվով, կանքի նորմալ պարմանները, թատերական արգեստի բարձր գնահատությունը – հասարակական այս ստիմուլն ու մշտական թատրոն ունենալու ձգտումը հաւ գերասանների համար հեռավոր իդեալներ ելին։

Եեթէ թերթելու լինենք հայկական պարբերական մամուլը, կամ լսելու լինելինք դերասանների հրապարակային ճառերն իրենց կողեգանների բենեֆիսների, հորելանների, պատվոր յերեկոնների կամ թաղման ժամանակ, մենք միշտ և ամենուրեք կիարդայինք և կլսելինք հետեյալը. – «Ճանր և թատերական մշակի տատառ ճանապարհը» – «Ճատասկոտ ճանապարհ» – պատկերավոր խոսքը գերասանի դառնացած սրտից թուոծ ճիչն եր, վոր սերնդե – սերունդ կտակվում եր գերասաններին։ Իր դրության վողբերգության իմաստն ալդ արտահայտությամբ լավ եր բնորոշվում։

Մանր բուժուազիան դեպի ալդ ճիչը «իդեալիստական» վերաբերմունք ուներ, իսկ խոշոր բուրժուազիան գերասանի գանգատաները սովորական «կենցաղային» լերեսութեր համար հայկական ներկալացումներ տեսնել, նա լավ տոն չեր համարում։ Հայ թատրոնը նրան անհրաժեշտ եր իր քաղաքական – սոցիալական նորադարձական համար, մասսաներին գաղափարական և հոգեբանական բուրժուազիա – նացիոնալիստական մշակման յենթարկելու։ Ալիք և պատճառը, վոր հալ բուրժուազիան՝ ի դեմս Ավան – Յուղբաշանի, Արամանի, Մելիք – Ազարյանի, Մանթաշյանի, Փիթոյելի և ալլոց, թատրոնի համար «կարկառուն մեկենասներ» տվյալ, Նրանք գինանսավորում ելին կենտրոնական քաղաքների (Թիֆլիս, Բագու) «Հայ Դրամատիկ Ընկերություններին» և վարչությունների միջ նստած իրենց քաղաքական մանկավեկների միջոցով համապատասխան տոն, ուղղություն տալիս «ընկերու-

թլան» աշխատանքներին, «Մեկնասոների ազգացավությունը» տարգա մեջ հաղիվ միայն 4-5 ամիս եր տևում, թատերական գործիչներն իրուր ջանքեր ելին թափում «մեկնասոներից» ավելին ստանալու, Քանի — քանի անդամ զոներ են ծածկվել թատերական գործիչների լիրեներին, թողնելով նրանց նախասենյակում՝ գլխիկոր գրությամբ։ Ավելի վճարելը նրանք համարում ելին անմիտ շռայլություն և գերասանների ծովության աղ լուր Ահա ալսողիսի պայմաններում լիրջանիկ եր համարվում այն գերասանը, վորը ձմեռվա հանգրվան եր գտնում «ընկերության» մեջ։

Սակայն կար գերասանների մի ուրիշ մաս ևս, վորը բուռն կերպով արհամարված ու հալոծված՝ իր «մեկնասոն» և «Դրամատիկ Ընկերության» վարչության մեջ նստած կամակատարի կողմից, իր «չափից ավելի դեմոկրատական տեսակետների» համար Սրանց վիճակն ավելի քան վատթար եր, Անընդհատ ճամրության «ծանր ցուցը» վալր եր գրվում։ Նրանցից վորեն մեկի մահվան ժամանակ։

Այս բոլոր գեպքերում ի՞նչ խոսք կարող եր լինել գերասանի, իբրև բարձր կուլտուրական տիպի մշակման մասին։

Բայց, չնայած շնորհալի գերասանների հառաջադիմության արգելակող քաղաքական-հասարակական այս պայմաններին, մենք նրանց գալիքելում տեսնում ենք այնպիսի վիթխարի արտիստներ, նրանց արվեստի, ստեղծագործության այնպիսի զննիթներ, վորոնք, իրավամբ, հայ թատրոնի պատմության կորիֆեյները պիտի համարվին մեր պատմաբանների կողմից։

Կուտակված պոտենցիալումք ժայթքում եր՝ իր շուրջն ալրելով։

Սակայն ապերախտ եր Մելպոմենը...

Հանձարեղ Աղամյանը մեռավ քաղցի մեջ...

## ԹԱՏՐՈՆԸ ՊԱՏՅԱՆԻ ՄԵԶ

Հայ բուրժուազիալի պիտականության ժամանակ, թատերական գործիչների լիբերալ հատվածը ին ու վառվառն հույսեր եր տածում Հայաստանում հաստատված ունիուրույն,, և ,անկախ,, քաղաքական կարգերի նկատմամբ։ Նրանք ցնծուն աղդարարություններ ելին անում, վոր՝ պիտական սիփական թատրոն, մըշտական ու կայուն գերասանական խումբ ունենալու ժամը հասել

ե, վոր սկսվելու լե հայ թատրոնի մի փառավոր շըման։ Վերջապես, կանոնավոր դրամատիկ խմբերն իրենց ոձիքները կազմակերպութիւնների և բագվի թատրոնների տհաճ հրուրընկալությունից, լիրը, որինակ, նախկին Արտիստիքական թատրոնը շաբաթը միայն մեկ որը, «Նշանափոր լիրկուշարթին» եր հատկացնում հայկական ներկայացումներին։ Թատերական արվեստը կապրի իր «Գուկեղարը», իր «աննախընթաց» ու «հախուռն» վերելը։

Սակայն, կլանքն ունի իր ծամանությունները... Մի անգամ, լիրը թատրոնի մոլեանդ որոգիչներից մեկը, թատրոն կազմակերպելու միտք հայոնց ֆաշիստական կոսովության՝ դաշնակցության լիդեր և վարչապետ Խատիսյանին, նա զարմացած գեմք ընդունեց ու ապա՝ քմծիծաղով պատասխանեց։

— Ի՞նչ եք ասում... Կառավարությունը նախ պիտի զբաղվի ուժիղ բանակ ունենալու, ապա՝ մեր անձուկ տերիտորիային, սահմանների վեճի կարգավորմամբ, պարենավորման ու այլ խընդիրներով...։

Իսկ լուսավորության մինիստրի պատասխանն ավելի հակերծ եր։

— Քանի կա ներքին ու արտաքին թշնամին, այդ խնդիրը կառավարության համար մտահոգիչ լինել չի կարող...։

Մոլեանդ գործիչը հետագայում խոստավանվում եր, վոր իր հուսախորությունն արդ պահին կատարալ եր։

Թատրոնի հարցերի բարեհաջող լուծումը կախված եր «Ճոպվից» և Հայաստանը «ներքին» թշնամուց մաքրելու հեռանկարի հետ։

Նա իրավունք ուներ հուսախարվելու, վորովհիտե դաշնակցական Հայաստանում թատերական աշխատանքների զրությունն ավելի քան անմիտարարական ու գորշագույն դարձավ։

Յեփրազիի իմպերիալիստական բուրժուազիալի օղեմոկրատիալիստական» որդան-պարլամենտի՝ ըստ պատկերի և նմանության յուրում Հայաստանում ստեղծված պարլամենտը կլանեց թատրոն հիշեցնող ակումբի թատերաբանը և բիմը։ Իսկ Յերեանի լիբերորդ թատերաբանը, վորտեղ հայ գերասանական խմբերն մվելի հաճախ ելին յելույթ ունենում (նախկին Զանշիմբեր մվելի թատրոնը, այժմ՝ Կարմիր Բանակի Տուն), նախ գոլագրանի թատրոնը, այժմ՝ Կարմիր Բանակի Տուն), հայ դարձավ տիֆուվ վարակվածների հիվանդանոց, հետո, մայրաքա-

ղաքի պարետի ոխուալներն արտիստիկ կերպով կատարող ֆան-  
ֆարոն (պրոֆեսիայով գերասան) Շախաթունու ռեզիդենցիան,

Պարլամենտական պատշաճության համար համապատասխան

կերպարանափոխման յենթարկվեց ակումբի թատերարահը, իսկ  
բեմն անհետացավ հաստ տախտակների տակ: Նորակառույց բեմն  
էելան՝ բարոյական նկարագրով անհամեմատ բարձր գերասան-  
ների փոխարեն՝ «ազգային աղաները», «տիեզերական թու-  
թակները», քրեական մուժ գործերի ճարպիկ «հերոսները», սպի-  
տակ «սոցիալիզմի» յերդվալ-հավատարմատարները, քաղաքա-  
կան արգահատելի յանուաններն ու սկսեցին սարսուզդեցիկ և  
արյունոտ մի վողբերգություն խաղալ աշխատավորության գըլ-  
խին...

Դերասանն ի տես և ի լուր այս ամենին՝ մնացել եր ապշա-  
հար...\*)

Նա իր արվեստի համար ոթևանչեր գտնում վհչ զորոգի-  
տական կատաղի արտահայություն ստացած ազգայնամոլ-  
մենչիկների վրաստանում, վհչ աշխատավորության կլասիկա-  
կան դահիճ մուսաֆատիստների Աղբեջանում: Իսկ Հայաստա-  
նում...

Նշանափոր վողբերգակ Աղամյանն իր կանքի վերջին շրջա-  
նում բարեկամներից մեկին Պոլսից Թիլֆիս ուղարկված մի նա-  
մակում գրել ե, վոր՝ նույթական շատ վատ գրության մեջ գրտ-  
նվելով՝ բարեկամները հոգուտ հրվանդ Աղամյանի, Պոլսում, նրա  
մասնակցությամբ ներկայացում են կազմակերպում: Ներկայաց-  
ման յերեկոն նրա վշտահար սրտին անհուն խինդ և բերում:  
Հանդիսատեսների ներկայությամբ իր մեկ ծանոթ յերկրագույց»  
նվեր և ստանում հոգեպարար բուրմունք ունեցող ծաղկեփնջեր:  
Հետեւալ որը, «Երկրպագուն» ծառայի միջոցով ուղարկում և  
Աղամյանին իր ալցետումը, խնդրելով իրեն վճարել գնված ծաղ-  
կեփնջերի արժեքը...

Աղամյանը խորունկ թախիծով և խոսում դեպի արտիստը  
ցույց տրված այդ ստոր վերաբերմունքի մասին:

Մոնրանի մըցորդ արվեստագետի վորախի սրտառուչ միա-  
մտություն...

\*) Մեր խոռը վերաբերում և գերասանության հիմական մասսային  
նական մի քանի անհատ դերասաններ, վորոնք սերտորեն կապված եյին դա-

«Յերկրպագուի» այդ և նման վերաբերմունքը շատ չնշին  
և նույնիսկ անմեղ և այն քստմնելի փաստերի համեմատու-  
թյամբ, վորոնք տեղի են ունեցել տիրահոչակ դաշնակցական Հա-  
յաստանում:

Այն չրջանում բազմաթիվ են դեպքեր, յերբ զանազան քա-  
ղաքներում ու ավաններում մեծ դժվարություններով կազմակերպ-  
վող ներկայացումները կիսից ընդհատվում եյին, թատերասրա-  
հում տեղի ունեցած աննկարագրելի ծեծկոտուքի և, լեռ բեմն  
կրակոցների պատճառով: Խուլիգանական անսանձ ու պորտա-  
բուլծ տարրերը, գաշնակցական հարրած օտղերքը, գրավելով թա-  
տերասրահները, շատ անգամ իրենց թայֆալաւան հաշիվները  
մաքրում եյին այնտեղ: Քիչ չեն նաև այն դեպքերը, յերբ մա-  
ուկերազարդ «հանդիսականը» ցինիկ ուսանելիներով միջամտում եր  
ներկայացմանը մասնակցող դերասանների մենախոսություննե-  
րին ու դիալոգներին, իսկ հետո՝ սպառնալիքով ստիպում ընդ-  
հատված ներկայացման վարագույը բարձրացնել ու խաղը շա-  
րունակել:

Այդ քստմնելի դեպքերի հեղինակները միշտ ել անպատիք  
ելին ննում:

Իսկական թատերասեր և կարգապահ հանդիսականը խուսա-  
փում եր թատրոն մտնելուց, իսկ դերասանի համար բեմը գար-  
ձել եր ահաբեկիչ ու վտանգավոր մի վայր:

Մահաղունչ այն որերին ծանոթ դերասաններից մեկը մի  
ալեգորիկ միտք հայտնեց:

— Շղթայակապ Պրոմեթեոսի կողքին՝ բոնությամբ շղթաւել  
են նաև Ապոլլոնին:

Բւրիշ ի՞նչ պիտի ասեր ծանոթս՝ թանձր մշուշով պատած  
ժամանակի ավանդակ բարքերի մասին:

#### ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԿՈՐԾԱՆՈՂՆԵՐԸ

Հանրածանոթ իրողություն և, վոր Ռուսաստանի Հոկտեմ-  
բերյան հեղափոխութեան առաջին տարիներին կապիտալիստա-  
կան պետությունների խոր բռնժուազիան՝ ինտերվենցիալից և  
տնտեսական ռլիկագից զատ՝ դիմեց նաև բազմապիսի պրովին-  
ցիաների: Այդ համաճարակի բացիները նրանք մեթոդիկ կեր-  
պով տարածում ելին մամուլի, լեռեղեցու, դպրոցի, գիտական կա-  
ճառի, գրականության, արվեստի, հրապարակալին բանագոր լե-

Հույթների միջոցով՝ ձգտելով պատնեշել հեղափոխության ալիքի առաջ: Սակայն, կեղծիքի, առասպելական դավադիր լուրերի մեխանիզմը նորբեր ու կանխամտածված կերպով եր սարքված: Ռեակցիայի ժարժ «հոգերանները» պարիսպ առաջացնելու համար՝ զիտելին, թէ, հասարական վոր խավի «նյարդերը», ինչպես քրքրել նպատակ եր դրված հասարակ սկան զանազան լովագույն զանգվածների, սոցիալիստական հեղափոխության հիմատմամբ կենդանական վախ ներշնչել, մասնավոր սեփականության «սրբազն ինստիտուտը» ել ավելի ամրացնելու և Ռուսաստանի հեղափոխությունը բնախեղդ անելու միջոցառումները հասարակական կարծիքի առաջ արդարացնելու համար:

Ու ցնցված «նյարդերով» ռանտեն, բլուրդերը, պուրիտանը, գենդին ու «գոսկեխուցզ» եպիլեպտիկները միարեան զոռում ելին Ռուսաստանի հեղափոխության հասցելին.

«Կատարել առւտո-դա-ֆե... նետել կարմիր հելուզակին խառույկի մեջ...»

Բորբոքված ուղեղների մեջ նետվեց ու մեծ ժողովողականություն ստացավ պրովոկացիալի մի շափազանց ծիծաղելի տեսակը:

Բոլշեվիզմը քաղքենուն ներկարացնում ելին դաշույներն արյունուշտ բերանին, գաղանանան դեմքով ու բորենու աչերով, երկարամորուս անձանց նկարազրով, նպատակ ունենալով բոլշեվիզմը նույնացել բանդիտին...

Հայաստանի աշխատավորության հեղափոխական զորեղաթափ ընդվումների պահին, դաշնակցական ու ալլ հականիդափոխական-հետազդիմական ուժերը մեծագույն լեռանդով ու փութաջանությամբ ոգտվում ելին լեվոպական և ամերիկան «քեռիների» պրովոկացիաների փորձված զինանոցից: Միայն մի տարբերությամբ՝ «դաշույնը» փոխարինել ելին «կացնով»:

— Այդ մոլեգին հորդաները կուրծանեն մեր լերկիրը, նյութական և հոգեոր կուտուրան, բնակչությանը կացնահար կանեն: Պիտի վոչնչացն ել նրանց — փրփուրն ի բերան չորս դին աղաղակում ելին նրանք:

Սակայն, այդ պրովոկացիալի վոտքերը կարճ ելին, Դաշնակցական անարդ ու հեղձուցիչ էծի տակից հավաքարար դուրս գեղաջաստանի աշխատավորությունը լիովին ըմբռնել եր պրովոկացիալի արժեքը: Նրանց հեղափոխության շիկացած զենքն աղջկեցից հականեղափոխության դեմ և յերկի ներսում մոլիրի

կույտ գարձրեց այդ ու նման պրովոկացիաները: Իսկ «կացին-ները»...

Հայաստանի խորհրդանացումից մի քանի որ հետո, Ցեղեվանում մնացած դերասանների մի խումբ, կուլտուրական ճակատում զործող բոլշևիկ ղեկավարների առաջարկությամբ ու ոգնությամբ՝ կացիններով ղիմեցին պարլամենտի շենքն և թատերաբեմն ու պարագաներու պարագաների մաքրելու համար՝ քանութեացին տախտակե պատայանը:

Այդ վայրկյանին, նույն շենքի ճակատին փակցված եր արդեն մեծադղիր պլակատ — լողունգ:

— Արվեստը՝ մասսաներին — :

### «ԽԵՆՑԵՐԻ ԱՐԴԱՎԱՆՔԸ»

Մինչ-հեղափոխական շրջանում հայ թատրոնը տվել ե մի քանի ու վերաբարուներ: Նրանք, գտնվելով ոռւսական նորագույն ու համբավ վայելող թատրոնների և նրանց իրավական նորագույն ելին հայ թատաղեցության ներքո, կազմում ու ներկայացնում ելին հայ թարբերակության նախագծերը, Այդ թարբերիչուներից՝ իր համառությամբ աչքի յեր ընկնում դերասան-ռեժիսուրը Սեհամառությամբ աշխատանքին գրքուրկով հրատարակեց վում և անը, փորը մինչև իսկ առանձին գրքուրկով հրատարակեց ծրագիրը, հասարակական կարծիքի գատաստանի առաջ քններկելու համարուներ շահելու և համարուներ շահելու նպատակով:

Ծրագրերի հարեանցի ծանոթությունն անգամ վորոշակիորեն ցուց և տալիս նրանց պալիտատիվ, «նյազարյուն» բնույթը:

Մինչդեռ ոռւս առևտուրական, արդիունարերական կապիտալի գարգացման պայմաններում նրա քաղաքական հավատամքի թատերական ներկայացուցիչներն իրենց եքսպերիմենտների համար կենսունակ ու պարարտ հող ելին գտնում ոռւս բուրժուազիալի կողմից լայն աջակցություն ստանալով՝ հայ սեփորմերի գունատ ծրագրերը «վոլիմպական գաղաթից» լերբեք ցած չիջան և կյանքի չկոչվեցին: Նրանք միշտ ել արժանանում ելին մի «պատվի» այն և՝ անփառունակ մոռացության:

Հայ թատրոնի սեփորմի նախագծերի հեղինակները «աչքաթող» ելին անում մի «գոռքիկի» պարտգա, փորը հետազում գարձավ թատերական գործիչների մի այլ խմբի գործունելու թիան կրգակենարուն ու յերկետը:

Անդրկովկասի խորհրդայնացումից առաջ, թատերական լեռտասարդ աշխատողների մի խումբ, խորապես հիմասթափվելով գոլություն ունեցող քաղաքական-հասարակական ռեժիմից և, ինչպես նրանք են առում՝ «գեղարվեստական շնչահեղձ անապատից և անհանդուրժելի սուրոգատից», իրենց հայացքը սկսեցին պըռ-լիտարական հեղափոխության որրան-Մոսկվա:

Թատրոնի վրա ունեցած հեղափոխության ազդեցության հետավոր շորշովները նրանք զգում ելին: Յերկրի այս կամ այն վալորերում պարբերաբար բռնկվող բանվորական և աշխատավոր գուղղացիության քաղաքական լեռության մտափորականության ալիք շիրտի վրա հեղափոխության ազդեցությունն ավելի եյին ուժիղացնում թարմ ու կիսասարար զով անելով նրանց մտքերին ու հոգական աշխարհին:

Վորքան զորեղանում եր ներքելից փչող զովն, այնքան ծանր ու մզգավանջացին եր դառնում ուսակցիան:

Քաղաքական հայացքների նման փոփոխության պրոցեսում, պարզ եր, վոր այդ խումբը վերջնականապես պիտի թոթափեր իրենից ազգայնական-բուրժուական հասարակարգում հնարավոր համարվող թատրոնի բարեփոխության պատրանքներն ու կանգներ հարցի արմատին նիւթ ուղիղ վրա: Թատրոնի սեփորմի բոլոր տեսակի կիսաճամբաները «սալլը» տեղից չելին շարժեւու, թատրոնի հարցը սպեցիֆիկ հարց լինելով, միաժամանակ հաղաքական առաջնահերթ հարց եր: Պրոլետարիատը գերիշխանության դիմելով՝ լուծումն պիտի տա ալիք հարցին: Այդպիս եր մտածում արդեն թատերական աշխատողների վերոհիշյալ խումբը Անդրկովկասի խորհրդայնացումից առաջ:

Ֆիլիստիք նրանց հայացքը քիմերիկ եր համարում և ուրիշներկայաց՝ ում իրեն վատթարագույն մողեռնիզմի տեսնդախտով բռնված տեսակետ:

— Խենթեր են... տասնչակ տարիներով ամբարվածը կխորտակեն, իսկ նորն ել չեն ստեղծի... Պետք է անսպասու մնա տեսականորեն ստուգած հինը, — գանգատվում եր Փիլիստերը:

Բայց նրանք, առանց վալրկան անգամ ականջ դնելու հետում ուժերի խարտոցի տակ հղկված քաղքենու «ինտելիգենտական» նվոցներին, խանդակառությամբ դիմավորեցին խորհրդայնացման պատմական խոշորագույն ակտը. Ու մինչ լերկչութերահավատն ուշքի կգար անցքերի ցնցումներից, նրանք հաս-

աատուն ու կուռ կամքով վոտք գրին հեղափոխության սրարշավ գնացքը:

Վորքան ուսարութիւն իր հոգեվիճակով սմբված սկեպտիկին հեղափոխության մեծ արուրադուրի հատու խոսքը՝

Տоварищи,

Դайте новое искусство —  
такое.

Чтобы выволочь республику из грязи, —

նույնքան հասկանալի ու հարազատ եր նրանց:

Նրանք գիտեյին, վոր այս կոչով բանաստեղծը չե թե իր սուբյեկտիվ ցանկությունն եր հայտնում, այլ դասակարգաւորին թշնամուդեմ մարտի լելած բազմամուլտոն մասսալի հուզումնառատ խոհերին ու իդձերին եր արձագանքում: Մասսալի տրամադրության մեջ նրանք տեսնում եյին ստեղծարար ներքին հսկայական ուժերի առկայությունը, վորն ընդունակ պիտի լինի մարդկային կյանքում չտեսնված մոնումենտներ կերտելու:


Ապա, ուրեմն, թող կորչի կորաքամակ ու անլուկս աչքերով թերահավատը:

Պարզ ե, վոր խորհրդային ընդարձակ գործնականի յեռուղենից թատրոնն անմասն չպիտի մնար:

Նրանց վոգեվորության ու յեռանդի առաջին ապացուցը մեկը՝ Սահման Շահումյանի անվան թատրոնն եր վագագի կազմակերպվեց թիվի լիզում, 1921 թ. մարտ ամսին (Պատահականի խորհրդայնացումից յերեք շաբաթ հետո), մյուսը՝ Հայաստանի խորհրդայնացումից մի քանի որ հետո, Ղարաբիլիսիայի Հեղկոմի առաջարկությամբ կազմակերպված թատերական խումբը, վորն Ամուսարաց յանի անմիջական գեկավարությամբ գործում եր Ղարաբիլիսիայում, Ստեփանավանում ու նրանց շրջակա գլուղերում:

Շահումյանի անվան թատրոնի շուրջը համախմբվեցին ըստ մեծի մասին յերիտասարդ ուժեր, իսկ ալիք գործի գլխավոր նախաձեռնողներից մեկը՝ ուժիսոյորական ասպարիզում նոր աշխատանք ուղիղ առաջնահերթ դիմումում մի քանի որ հետո, Պատահականի շաբաթ առաջարկությամբ կազմակերպված թատերական խումբը գործում եր Ղարաբիլիսիայում, Ստեփանավանում ու նրանց շրջակա գլուղերում:

Հայ թատրոնի անցյալում ամ ենկին տեղի չունեցած ներկայացում պատրաստելու լաբորատորական տոկուն աշխատանքներից հետո, Շահումյանի անվան թատրոնը թիֆլոզում հանդես ցեկավ մի քանի բեմագրությամբ՝ որինակել չույսի կործանում 2003-2



ՀԱՅ - ՀՀՊԱ

ով և «Կատաստրոֆա»-լով (առաջինը բեմադրեց ընկ. Ստ. Քափանակյանը յերկրորդը՝ ընկ. Լեոն Թալանթարը):

Այս ժամանակի խորհրդավին կուլտուրական կյանքում նրանց ներկայացումները համարվեցին ուշագրավ ու հետաքրքրական իրադարձություններ:

Թատրոնի հասցեին խորհրդավին առաջավոր հասարակականության կողմից ուղղվեցին դոփեստներ ու լիարուն քաջալերանը:

Ցուց տրված լուրջ աշխատանքով և վաստակած հաջողությամբ նրանք վկայեցին, վոր իրենք նոր գործ ստեղծելու համար թեթևամիտ շաղակրատներ և եժան ֆեյերկերկի սիրահարներ չեն (ինչպես արվեստի բնագավառում իրենց տեր ու տնօրեն համարող փոշակալած պահպանողականներն ելին ասում), այլ՝ նոր խորհրդային կոլյուրա կողմերի բանակի յերիտասարդ մի զոկա:

Թատերական այդ գործիչները յերեք չշոյվեցին հաջողությունից, շատ լավ գիտենալով, վոր խոօսությունից դեռ առաջներն են:

Այսանամատի որերից մեկ որ, Շահումյանի անվան թատրոնի խումբը Հայարտանը առնական իրարանցման մեջ եր: Մեկն յերգում եր, մյուսը՝ ծիծագույն, յերբորդը՝ զատակում, չորրորդը՝ բարձրագույն արտասահման: Յերիտասարդների կայտառ տրամադրությունը մինչեւ ուղն ու ծուծը վարակել եր թե հասակավոր ընկերներին և թե գործնական հոգեկուլ ծանրաբեռնված դեկալարների:

Այդ որը նորաստեղծ թատրոնի կյանքի լավագույն որերից մեկն եր:

Խորհրդավին Հայաստանի կուսադղկոմատը խումբը գաստրոլների յեր հրավիրել Յերեան՝ այնտեղի աշխատավորության համար ներկայացումներ տալու:

Թատրոնն այս հրավիրի մեջ անսում եր գեղի իր սկսած գործը և հարգանք, և վստահություն, և ուշագրություն:

— «Ենթերն արշավում են ավերված մի յերկիր, հույս ունենալով «փիլիբուփական քարի» միջոցով մետաղը վոսկու վերածել: Խումբը կրկին անդամ-կարծրացած արհամարանքով յերես դարձրեց և բաց ճակատով ու շողջողուն հեռապատկերով, խորհրդավին իսկական վրան գրան գրպանում, հունիսի վերջերին վոտք դեպի Հայաստան մեկնող զնացքը:

## ՏԱՐԲԵՐ ԲԵՎԵՐՆԵՐԻՑ

Կարծես մասսիվը պատռելով՝ հեղափոխությունն իր բեղմավոր ընդերքից կյանքի մակերեսը հանեց՝

— Արվեստ պատկանում ե Խողովուրդին — պահանջը: Հայկագավակ սաթետի սեաթուլը աչքերը պենսնելի տակ փայլեցին: — Եվրիկա...

Այս փորմուլը մեզ շատ և հիշեցնում հին Հռոմում գոյություն ունեցած մի սիստեմ՝

— Panem et circenses.

«Գիտե՞ք, այդ սիստեմի («Հաց և հանդիսանք») միջոցով արխատութական և գեմոլիտական կուսակցությունները ձգտում են ընդհանուր քաղաքական կյանքի ընթացքի վրա ազդեցություն գործող քաղաքավին մասսան իրենց կողմը գրավել...»

«... Տիրողների քաղաքական դիրքերն անխստի գարձնելու վագատակով՝ անհրաժեշտ եր ներշնչող թիվ կազմող լուսպեն՝ պրոլետարների և արհեստավորների ուժը շահել...»

Պենսնելի վրա ցրիվ թափված մազերը լիտ տանելով՝ հայորդին ձգից ու պաթետիկորեն շարունակեց:

«Ինչպեսի հարամատելիուն... Ի՞նչ և հարկավոր պատվարժան գեմուսին... Հաց և հանդիսանք, — հաճեցեք... Ու հազարները հրավիրվում ելին մի հոգակապ կրկես: Այստեղ նրանց անընդհատ մատուցվում եր ուտելիք և ըմպելիք: Նրանք ագահաբար խժուռմ ելին ու սրախոսում... Նուտով նրանց աշքի առաջ կը բացվի մի պեղեցիկ տեսարան... Շքեզ յերթով արենը կմտնեն գլավատորները: Նրանք ուժոված են պողպատե մկաններով ծուլի նման ուժեղ ու առողջ գլավիտառներն իրենց արյունահեղ միզակամարտով կրվարձացնեն դեմոսին: Զե՞ վոր պետությունն այդ նպատակի համար մարտիկներին յերկար ժամանակ սնել եւ վարժեցրել մարտի բոլոր կանոններին...»:

Հուրիրան արկի վրա անձոնություն փնտողի ջանասիրությունը, հայորդի սաթետը ցանկանում ե դաստկարգային իմաստով միանալաւայն հակոնելա յերկու ֆորմուլը նույնացնել:

Իսկ հազարամյակների հասակից վիր ուղցող լինիսն «Հաց և հանդիսանք» («Խլեբա և զրելիք») սիստեմի առթիվ հետևալն եւ ասել:

«Սակայն թող այդ դեպքում չմոռանան, վոր հանդիսանքն

իսկական, խոշոր արվեստ չե, այլ ավելի շուտ առավել կամ նվազ չափով հաճելի զվարճանք: Այդ գեղքում չպիտի մոռանալ, վոր մեր բանվորներն ու գլուղացիները վոչնչով նման չեն հոռմեյական լուծաբն — պրոլետարիատին: Նրանք չեն պահվում պետության հաշվին, այլ իրենց աշխատանքով պետությունն են պահում: Արյան հեղեղներ թափելով ու անթիվ զոհեր տալով նրանք հեղափոխություն են «կատարել» ու վերջինիս գործն հն պաշտանում: Իրոք, մեր բանվորներն ու գլուղացիներն արժանի լին ինչ վոր ավել խոշորին, քան զվարճանքն ե: Նրանք իսկական մեծ արվեստի իրավունք են ձեռք բերել:

Թիրես սա անդուրեկան և հնչում հին չոռմի պարսպին՝ իր «գյուտի» հետ միասին կառչած հայորդու ականջին, բայց — փաստ ե: Իսկ փաստերի լեզուն՝ վերին աստիճանի դաժան:

Լինին այնուհետև խոսելով կուտուր սիի զարգացման անհամեցած սլայմաների մասին, ավելացնում ե — «Այդ հողի վրա պետք ե աճի իրավես նոր, կոյունիստական արվեստը, վորը կտեղծի իր բովանդակությանը համապատասխան ձե»:

Սրանից հետո կարելի է արդուք անող նսկայի պահանջը համեմատել շահագործողների կողմից հնարած «Հաց և հանդիսանք» սիստեմի հետ:

— Արվեստը պատկանում ե գողովուրդին, — ասում ե հանուր պրոլետարիատի հանճարեղ ուսուցիչն ու շարունակում.

«Նա պետք ե խորագուն արմատներով մտնի աշխատավորական լայն մասաների ամենախորքը: Նա պետք ե մասսային հասկանալի լինի ու նրանց կողմից սիրված: Նա պիտի այդ մասսալի զգացմունքները, միտքն ու կամքը միասնականացնի: Նա պիտի արվեստագետներ արթնացնի նրանց մեջ և զարգացնի նրանց...»

Այս լողունդի կենսագործման ժամանակ ըուրժուական եղուխական արժեքավոր նվաճումները վոչ թե պետք ե մի կողմ նետվին, այլ ընդհակառակը, պիտի մեր կողմից քննադատորեն յուրացվի ու վերամշակվի օալն ամենը, ինչ վոր արժեքավոր ե լիրկու հազար տարուց ավելի զարգացում ունեցող մարդկային մտքի և կուլտուրալի մեջ, պրոլետեական մորգկության վող զարգացումով ստեղծված կուլտուրայի ստույգ հանաշողությամբ միայն, այն վերամշակելով միայն հնարավոր ե պրոլետարական կուլտուրա կառուցելու: Լինինը գտնում ե, վոր առանց այս հասկացողության՝ մենք չենք կարողանա վերջին խնդիրը լուծել: Ուրեմն՝

քուրժուական եպոխայի կուլտուրայի և արվեստի լավագույն նվաճումները միլիոնավոր մարդկանց սեփականություն պիտի դարձնել այն քննադատաբար լուրացնելու և վերամշակելու միջոցով, վորով և նոր, խոշոր կուլտուրայի ու արվեստի ծնունդի բազա կատեղծիլ: «Այս ծնունդը պիտի պատկերացնել զիալիկ-արկորեն» — (Լինին):

Ահա ինչպես և ըմբռնում բոլշևիկը «արվեստը պատկանում և ժողովուրդին» նշանաբաննը:

Հեղափոխության միջոցով շթայաղերծ լեզած ստեղծագործական նոր ուժերի զարթոնքը, վորը պիտի նոր արվեստ ու կուլտուրա գարբնի, թերագրում և մեղ.

«Մինք, կոմաւնիստներս, ձեռքերը ծալած չպիտի կանգնենք և թռոյլ տտնք քառուին, ինչպես ուզի զարգանա: Մինք պիտի լիակատար պլանաշափությամբ դիկայարենք այդ պրոցեսը և նրա արդյունքները ձևակերպենք»: — (Լինին):

Այս սկզբունքավին զիալրավորումով Խորհրդացին Հայաստանի որդանները ձեռնամուխ պիտի լինինեան պատգամի իրագործմանը:

Նրանք շատ լավ ելն գիտակցում, վոր հատկապես իդեոլոգիական այդ վերնաշենքի ճակատամասում լիոնացած դժվարություններ կան:

Խավարչտին անցյալը՝ կուլտուր — նյութական և տեխնիքական տեսակետից՝ միկրոսկոպային արժեքներ եր ժառանգություն թողիւ:

Ժանդարմական հողոտող բռնակալությունը խեղում եր «այլազգի» Յորեանիան նահանգի ու հարակից վայրերի նյութական արժեքների աճումը: Իսկ լիրը «կծկված հարմարությունները» ժառանգական հայոց կուլտուրա անցան դաշնակների ձեռքը, նրանց իշխանության որերին այդ արժեքների մեծագույն մասը վոչնչացավ: Յեթե սրան ավելացնելու լինենք կուլտուրական ասպարիդում աշխառ արական արժագիշեաները և Խորհրդացին աշխատողների առաջավոր կազրի փորք քանակությունը, — ստացված ժառանգության տիտուր պատկերն անթերի կը լինի: Բայց, ինչպես պոյեան և ասում, պատկերն անթերի կը լինի:

«Երանց ձգված մկաններում ուժն և նախել խոնավ հողե, — Յեթե ուղենարկներին նոր տեմպ կը տան ու նոր ուղե...»  
Յեկ դժվարագույն պայմանները հաղթահարելու համար խորհրդացին առաջապար հասարակալնությունը զինված եր այն

«Ճնկաչոք» անելու մի հուժկու, յերկաթակուռ կամքով։ Որվասկ ու անծիր աշխատանքի ծովում կուլտուրական ֆրոնտի մարտիկները վայրկյան անգամ մոռացության չելին տալիս առաջնորդի խոսքը։ «Այդ ցույց ե տալիս, թե ինչքան շատ ու շատ գործ ունենք մենք կատարելու, վորպեսզի մեր պլուտարական գրավումների հիման վրա իրապես հասնենք կուլտուրական գեթ վորոշ մակարդակի»։

Հայաստանի խորհրդայնացման առաջին շրջանում, կառավարական համապատասխան մարմինները սկսեցին վերահասու լինել ու հրահրել արվեստի աշխատողների նախաձեռնության բուրաքանչյուր նկրտում, գործնական յուրաքանչյուր փորձ։ Դրանով բավականավ, անշուշտ, չեր կարելի։ Միաժամանակ հարկավոր եր պետության ազդու ձեռներեցությամբ ու պրակտիկ միջոցառություններով լայնացնել արվեստի բնագավառում կատարվող աշխատանքների տակավին նեղ սահմանները։ Այդ պահանջի իրագործման հապաղումը նույնիսկ համարոր եր «Ճեռքերը ծալած կանգնելուն» և նոր արվեստի ու կուլտուրալի ստեղծման պրոցեսի հնարավորությունների պլանաշափ դեկավարության» նշանակության բուշեկյան հասկացողության ծալրահեղ նվազեցման։

Հենց առաջին տարիներում սկիզբ դրվեց աշխատավորության գեղարվեստական կրթության ու գաստիարակության նոր աշխատանքների, և զուգահեռ կերպով սկսեցին։ Նախապատրաստել հիմնադրելու այնպիսի ֆունդամենտալ գեղարվեստական հաստատություններ ու ձեռնարկություններ, վորոնք անհամեամատ ավելի գործունակ պիտի լինելին՝ արվեստը լայն աշխատավորության սեփականությունը դարձնելու։

Բնական ե, վոր այդ գործունելության դաշտում, թատրոնը պիտի համարվեր կարեռագույն որյեկտներից մեկը։

Խորհրդային կուլտուրական աշխատանքների նիստերում բոլեսվիկները բատրոնին հակայական նեանակուրյուն են, տալիս Տեղին ենք գանում հիշտատակել հետեւյալ զրուցը։

1925 թ. արվեստի աշխատողների համախութենական համագումարում ընկ. Կալինինն իր ճառի մեջ ասել ե — «ճիշում հմ, հինգ տարի առաջ եր, Յես Վլադիմիր Իլլիչի տանն ելի, ու այնտեղ մենք խոսք բացինք այն մասին, թե թատրոնն ինչին փոխարինել Վլադիմիր Իլլիչը մտածում եր, վոր թերես թատրոնից զատ չկա վորես ինստիտուտ, վորես որդան, վորով կարողանայինք փոխարինել կրոնը։ Դեռևս բավական չե կրոնը վոչն-

չացնել ու դրանով մարդկությունը կատարելապես աղատել կրոսականության սարսափելի ճանապարհից, պետք է այդ կրոնը փոխարինել մի ինչ վոր բանով, և ընկ. Լինինն ասում որ, վոր կրոնի տեղ պիտի գրավի թատրոնը»։

### ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱԼՖԱ

Հայաստանի խորհրդայնացման յերկրորդ ոքն իսկ յերկրում մնացած գերասանների առաջ գործունելության լայն ասպարեզ բացվեց։ Այս կամ այն գավառում գործող գերասանների, անդամ սիրողների խմբերը Հայաստանի Կոմունիստական կուսակցության առաջարկով անմիջապես անցան Հեղկոմիների տրամադրության տակ, վորոնք բոլոր կարելիությունները գործադրում ելին խմբերի աշխատանքների նյութական ու բարոյական պատվանդանն ամրացնելու։ Դերասաններն իրենց հիշողությունները պատմելիս միաբերան նշում են, վոր սիրնչե այդ ժամանակամիջոցը նրանք իրբեք այնքան անձնամոռացության հասնող հնտուղիազմով ու նպատակասլաց մղություններով չեն աշխատել։ Վորքան այն որերին Կառավարական մարմինների հոգատարությունը նրանց ենտուղիազմի խոչը աղղակն եր, բայց միակը չեր։ Հիմնական աղջուրը — աշխատավորական մասսալի ուղաղբությունն եր, գեղի թատրոնն ու գերասանը տաճած նրա անզուսպ հետաքրքրությունը, սերն ու խանդաղատանքը։ Դերասանը սրահի մեջ տեսնում եր, նոր հանդիսական, բհմից կենդանի խոսքն ակնթարթորեն ընդունող ու առաջացած աղղությունները համապատասխան վերաբերությունների իրեն հաղորդող մի նոր ուժ։ Այդ ուժը ներգործող ու հորոգի գիշ եր, հյութալից ու պարաբու ուներու Այդ ուժի մակընթացությունն անհետ վանեց նրա հոգեկան քնիածությունը ապատիան և ահազին եներգիա կուտակեց։ Առաջ դերասանն անհծուած էր իր տաժանելի պրոֆեսիան, վորը ստորացումից զատ ծում եր իր տաժանելի պրոֆեսիան, վոր սկզբում եր աշխատանքի և կլանքի ընթացքում սկսում եր հետզետե խորշանք զգալ զետի իր գործը, առաջ նրա արվեստը զրեթի զրկվում եր «սրտից ու մտքից» ու դառնում մեխանիկական մի պրոցես։ Այժմ նա զգում եր, թե բուրժուական հասարակության մեջ ինքն իրը աշխատող տարր ինչքան զուրկ եր ինքնուրույնությունից ու անձնականությունից։ Այժմ նա ըմբռնել ե իր արվեստի սոցիալական արժեքի ու ոգտակարության վաեմ իմաստը, այժմ նա վորոշակի գիտի, թե

ինչ դասակարդի յե ծտուայում և այդ դասակարդն ինչ նպատակներ և հետապնդում: Յեզ, չնայած մինչխորհրդային անտեսական աղետալի կյանքից մնացած ընդհանուր կարիքին ու զրկանքին, (վորից, ի հարկե, զերծ չեր նաև գերասանը), այդ իմաստով ու նպատակներով ներծծված աշխատանքը նրա համար դարձել եր մեծագույն հաճույք ու բերկրանք: Այս թե ինչու, նրանք անձնութացութիւն համուզ հնատուզիազմի մեջ ելին: Դերասանները պատմում են, վոր իրենք աշխատում ելին որն ի բուն և ներկայացումներ տալու համար լինում ելին ամեն տեղ: Եինում ելին աբնպիսի դյուզերում, վորտեղ գաղափար չելին ունենում թատրոնի, ներկայացումների մասին: Թատերական այդ խմբերի գործունեյության մեջ «բեմն ու թատերապահը» սկսվում ելին գոմերից, բայց գաշտից կամ գպրոցական փոքրիկ շենքից ու վերջանում քողաքի հազիվ հազ տանելի թատերապահով: Շատ անգամ նրանք պիհսը, (իրենց կողմից՝ պարկերով կամ գորգերով պատրաստվող բեմերում) մինոււն վայրում ու միւնոււն որը խաղում ելին սեանսներով, յերկու-յերեք անգամ:

Հեղիոմների զեկավարությամբ աշխատող սակավաթիվ զերասանական խմբերի հանրողուստ այս աշխատանքները կատարելապես անհրաժեշտ ու խրախուսելի ելին: Նրանք, հարկավ, մեծ գործ ելին կատարում: Նրանք պատիվ ունեյին թատերական ավելի մեծ գործի ուղին հարթելու: Նրանց աշխատանքները քչքչան ու վճիռ առվակներ ելին, վորոնք միանալով մեծ գետ ելին կազմելու: Բայց անհրաժեշտ եր ապագա գետի հունը զնել: Այդ հունը պիտի սկսել տեսակարար կշռով ավելի բարձր ու մնայուն մի գործով, վորպեսի այն հետափոր ափեր ունեցող առաջիկա թատերական գործի ծափաբան անգրանիկ ցուցանիշը դառնա:

Այդ թատրոնը հասարակական-գեղարվեստական իր ֆունկցիայով պիտի դառնա թատերական լրջագույն ու մեծորակ արվեստի սկզբնաղբյուրը, Հայաստանի վողջ թատերական կյանքի կարգագործան ու զարգացման լծակը, բանվորների ու աշխատավորների սիստեմատիկ գաստիարակութիւնն որինակելի ինստիտուտը, ստեղծագործական նոր կադրեր պատրաստելու վայրերից մեկը: Կարձ՝ մուս հայ թատերական խմբերի շարքում նա պիտի ավանդարդի կոչում նվաճի:

Կոմիտսի վերաբաս որգանների յեվ Լուսմողկոմատի դեկուվար ընկերների մեջ հղացած այս միտն արագորեն հասունակամ եր, ու

մոտ եր արդեն գործնական միջոցառումների ժամանակը, յերբ Շահումյանի անվան թատրոնի խումբն յելալ Յերևան:

Շահումյանի անվան թատրոնի կալուստը խորը հետաքրքրություն առաջ բերեց: Ակնկալում ելին տեսնել թատերական արվեստի գրագիտ գործեր: Թիֆլիսից ստացված տեղեկություններն ալգախիսի սպասումի յերաշխիք ելին տալիս: Թատրոնի ներկայացումները, հավանաբար, դառնալու յեն թերևանի աշխատավորության հանգստի նպատակահարմար կազմակերպման ու նրանց գգացումների և մաքի հրաման գեղարվեստական դորեղ միջոցներից մեկը: Միաժամանակ ստուգման կառնվի ու կապացուցիչ այն տեսակետը, թե ինչու վարդամ ու շոալություն չպիտի համարել Յերևանում մշտական պիտական թատրոն ունեալու միտքը:

Շուտով (հովիսի սկզբներին) Շահումյանի անվան թատրոնն իր յելու վճներով վաշ թե արդարացրեց այդ սպասելիքները, այլ գեղազանցեց: Նրանց ներկայացումներն աշխատավոր հանդիսականների մեջ չնախատեսված ընդունելության ու հաջողության արժանացան: Խումբը գործել եր որվա զրոյցի առարկա: Բայրը ձգտում ելին տեսնելու թատրոնի ընմազրությունները: Հայ նոր թատրոնի սկզբնավորության համար բոլոր դիտողներն այդ ներկայացումները հաջող գրավական ելին համարում: Աշխատու որ հանդիսականները խոսում ելին այն մասին, վոր ամբողջ խումբը պիտի ընդմիջա պահել Յերևանում:

Այն ընկերներն ու բարեկամները, վորոնք իրական պայմաններն և ուժերի սակավությունը պատճառ բերելով՝ Յերևանում մշտական թատրոն կազմակերպելու միտքը վարդամ ելին գրտնում, սկսեցին համաձայնվել ու տեղի տալ հակառակ տեսակետին, Նրանք, ովքեր ցերեկները գետի խորհրդակին կուլտուրան բարձրացակամ ու բարեմիտ ժպիտ ելին ցուց տալիս, խեկ գիշերները՝ ատամնիր կրծտացնում, — ծոր տալով շալունակում ելին բարբառել այն մտսին, վոր այդ ձեռնարկումը նպատակին չի հասնի ու շայլություն կինին: Նրանք, ովքեր բացարձակ թշնամիներ ելին, — այդ մտադրությունը նորհրդական իշխանության «հերթական ավանտյուրիզմ» ելին հայտարարում:

Հայկոմկուսի Կենտրոնի գողմից կուստոկումատի արված առաջրանձի կենսագործումը Շահումյանի անվան թատրոնի յելություններն ել ավելի արագացրեց:

Շուլիսի վերջերին, այդ թատրոնում ծալը առավ վոգեկորու-

թյան մի նոր ու մեծ ալիք: Խումբը բռնկվել եր լուսացայու հույղերով ու կախարդիչ հույսերով: Նրանք տեսնում ելին, վոր իրենց աշխատանքի առաջին ծիլերն առիթ են դառնում ստեղծելու հիմնավոր մի գործ: Նրանք տեսնում ելին, վոր անշարժության, քարացման մեջ գտնվող հին թատրոնի դեմ մղվող պայքարի ձական ամրանում ու ընդգրածակվում ե:

Լուսժողկոմատն առաջարկել եր թատրոնի դեկավար ընկ: Ենքոն Քալանթարին իրեն հետ միասին ձեռնամուխ լինել Յերևանի պետական թատրոնի կազմակերպման նախապատրաստական աշխատանքին, Շահումյանի անվան թատրոնի գերասանկան ամբողջ կորեկտիվը նորաստեղծ թատրոնի ստեղծագործական կորիզը դարձնելով:

Մկանից նախնական աշխատանքների լեռանդուն ու վերընթաց մի շրջան:

1921 թ. սպոտոսի 16-ի յերեկոյան թատերական գործիչների ցրջանում կայծակի սրբնթացությամբ լուր տարածվեց, վոր Հայաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն այդ որվա յերեկոյան նիւթում հաստատել ե Յերեկովանում պետական մեայոն թատրոն ունենալու առաջարկ...

... Մինչև խոր գիշեր թատերական գործիչները հրճվալից գեմազով զրուցում ելին այդ վորոշման մասին, վաղվա անելիքներից գեղեցիկ ծրագրերին ծնունդ տալով:

#### «ՏՈՒՓԻ ՌՈՄԱՆՏԻԿՆԵՐԸ»

Պրովինցիալ պարկեշտությամբ կառուցված շենքի հեղինակները բնավ չելին կարող կուհել, վոր իրենց յեռանդի արգասիքը պիտի անցներ մեծ փորձությունների բովերով: Նրանցից ով կարող եր մտածել, վոր այդ շենքի յուրաքանչյուր պատը, անկյունը հարուստ ու խալտարկետ անցքերի մի՛մի հուշարձան են դառնալու ինչք չելին խնայի նրանք, յեթե իմանալին, վոր ապագայում այդ վայրն արժանանալու յե պատմագրի հիշատակության, իսկ նրա քարերից մի կտորը, գուցե վորեն ֆանատիկունագետ ունիկում է համարելու: Վերջապես կերպության մասին համար առաջարկության մեջ գործում է առաջարկության մասին պահանջման մասին պահանջման մասին:

Յեկ, լերկի, վոչ վոք այնքան դառնաշաղախ խոսքերով չենիշել նրանց անունները, վորքան սեմիստորը և գերասանը: Շենքի մականունն իսկ վորոշում ե նրանց հիշողությունների պարունակությունը: Թատրոնի սրահի յեղ բեմի փոքրությունը պատկերելու համար նրանք «տուփ» են անվանում այն: Ե, ինչ կարող ելին անել, քանի վոր յեղած շենքերի մեջ թատրոնին հարմար չենքն այդ եր:

Թատրոն հիմնելու ոգոստոսյան վորոշումից հետո, նրա դիրեկտորի պաշտոնով հրավիրվեց ընկ: Մամիկոն Գեվորգ Շահնշահանը (վորը, ի բաց առկալ 1922-23 թ. թ. թատերաշրջանի՝ անը (վորը, ի բաց առկալ 1928 թ. կեսերը, իսկ դիրեկտորի պահանջման աշխատել ե մինչյել 1928 թ. կեսերը, իսկ 1922/23 թ. թ. բաւերաջանակում դիրեկտորի պարտականությունները կատարում եր ընկ: Դանի ել Դ գն ունին, վորն ընդամենը մի սեղոն աշխատեց<sup>\*)</sup>):

Գործի կռչված ընկերները ներս մտան «ՏՈՒՓ»-ը: Շենքի ամայությունը նրանց շահեցրեց: Գիտեիլին, վոր թատրոնական ապարատը բազմատարը ու դանազանածավալ մեխանիզմ ունի: Այդ ապարատը կազմակերպելու համար իրենց գործը պիտի հիմք ունի կենդանի ուժեղությունով ու նրանց աշխատանքները մի հայտարարի բերելով, և խստագույնս անհրաժեշտ անդադար կենդանակ տարբերակ ստեղծումով: Այսինքն՝ բավական չեր կենդան ոժանդակ տարբերի ստեղծումով: Այսինքն՝ բավական չեր ստեղծագործող ուժերը ու նրանց սպասարկող աշխատակիցները, — հարկավոր եր նաև ունենալ բեմախաղին հատկացված հանգույթելի աքսեսուարներով մի հրապարակ: Պետք եր համահանգույթելի աքսեսուարներով մի հրապարակ: Պետք եր համապատասխան բեմական արխիտեկտոնիկական պայմաններ ստեղծել, պատասխան բեմական բամական արխիտեկտոնիկական պայմաններ ստեղծել, պամպա, ելեկտրասարք, սոֆիտները, կուլիս, բուտափորիա, բակ-վիզիտ, զգեստարան, գրիմի արհեստանոց, գերասանական սենյակներ, գեկորատիվ մաս ունենալ: Չե վոր կենդանի և անկենդան տարբերի կոորդինացիայի միջոցով և, վոր ներկայացում ե ստեղծատարբերի գործինացիայի միջոցով և, վոր ներկայացում ելին յերշանցում: Այն սակագ նցութերն ու իրերը, վոր մնացել ելին յերշանցում կահիշատակ ակումբից, նրա՝ սարգերով ու միներով վիստացող խոնավ նկուղներում, արդեն փչացել ելին: Իսկ գեռ և չփչացած, առաջ պահանջման մասին պահանջման մասին պահանջման մասին պահանջման մասին պահանջման մասին պահանջման մասին:

<sup>\*)</sup> 1930 թ. Պետական թատրոնի կողմից հբատարակված ալբոմում (մինչ այդ յերբեք նրա մասին գրքուցել կամ ալբոմ չել հրատարակել) ընկ: Գ. Վանադեցին յերեք հաղածում վոշինչ չե գրել թատրոնի կազմակերպման գործում ընկ: Ենկա հաղածում վոշինչ չե գրել թատրոնի կազմակերպման գործում ընկ: Մ. Գեղորգյանի, և. Քալանթարի և Ա. Բուրջալյանի կատարած գերի մասին:

շշուկել անգամ՝ չեր կարելի։ Այդ դեկորը յերկվորչակն եր հոչակավոր Ստանիսլավ կունկուն նկարագրած զեկորի, այն ե՛ «նկարվում եր հեռագոր պերսպեկտիվով, հսկայական, դատարկ, ժարդագործ հրապարակով, արձաններով ու շատրվաններով՝ մի փողոց։ Աւ ինը գերասանը կանգնում եր խորքում գտնվող այդ դեկորի մոտ, նա նկարված աներից անհամեմատ բարձր եր լեռեռում»։

Վերևում ասվածից գտա՛ այնպիսի թատերասրան ոլիսի լիւներ, վորտեղ հանդիսականն, առանց նեղվելու, կարողանար դիտել ու լսել ներկայացումը։ Ահա, այս շարքի ամենահամեստ սրահները թատրոնի էազմակերպիչներին թելաղրում ելին մաքսիմալ վերափոխութիւն յինթարկել շենքը ներքուստը։ Ասել թե՝ դա դժվար խնդիր ե, շատ քիչ ե։ Այս պահին, լեռը աղքատ ու բոկոտն էրկերը նոր միայն ազատագրվել ե՝ դաշնակուների ափրակարությունից, ինը դեռ սովահարության գեղնավուն հետքերը մարդկանց ինքնից չելին անհնատացել, ահութի դժվարություն եր ներկայացնում թատրոնի տեխնիկական յութական պահանջների կատարումը։

Անհատնում ձեռներեցություն և ճիղ եր հարկավոր բավարարելու սակագագետ թատրոնին։

... Կազմակերպիչների նշարդերը պրեկեցին, աչքերն ու ականջները սրվեցին, գլուխներն ավելի հնարամիտ դարձան։ Միցիւլայից ու Քարիբալից դուրս գալու համար։

Ակավեց շնչառպառ վազվառուքը, շտապ մեկնումներն ու մահուակրկիտ հետախուզումները։ Փնտումների սրբեկաները հասարակ միխից, կարտոնից ու կրեպեից հասնում ելին մինչև միջնադարի իսլանական կամ, ինչպես շարլուով ընդունված եր ասել «Մոլիերի ստիլով» կոստյումները։ Այդ փնտումներն այնքան տենդու ելին, վոր յերբեմն կռւրողների տեղիք ելին տալիս։ Պարզ ե, վոր «Մոլիերի ստիլով» կոստյումներն ու հոռվեհական տիպի տոգաները՝ իրենց տոնմական արխատկբատիկ ծագումով պարծեցող յերեանցի նախկին աղաների մոտ չելին գտնվի, իսկ Մոլլա-Գլոդ-Հայի մասին՝ խոսք չեր կարող բացվեր Դրանք կարող ելին գտընվել միայն խոշոր քաղաքների ազգանացված դարդերորներում, կամ մասնավոր գարգերումների դժվարահամ տերերի ու անտիկվարների մոտ։ Այդ հողի վրա կոնֆլիկտներ անխուսափելի ելին, ե, յեթե նախախորհրդակին պալմաններում ծագելին, — թատրոնի գեկավարների եքսպանսիվ քալիերն լերկի լիրկու հանրապետու-

թյունների դիվանագիտական հարաբերությունների վրա ինչ վոր ապրեցություն կունենալին։

Պակաս ծանր չեր ստեղծագործող ուժեր հավաքելու հոգուր։ Այդ աշխատանքը շատերին առերևույթ դրուրին եր թվում, բայց մոտիկից ծանոթանալով՝ հակառակն եր ապացուցվում։ Դերասանական ուժերի՝ այսպես կոչված «գերարտաղբության» մասին շրջող (նախախորհրդային շրջանից լեկած) լուրը լուսադողկոմատն շրջող (նախախորհրդային շրջանից լեկած) լուրը լուսադողկոմատն ապետական թատրոնի գեկավարներն անհեթեթություն ելին համարում։ Փաստը պերճախոս կերպով ցուց եր տալիս, վոր հայաստանի զանազան մասերում ու հարնան հանրապետություններում տանիքի գործող թատրոնների դիմումները՝ աղատ դերասաններին աշխատանքի գործողելու մասին, արկեստի աշխատույների միունքություն եր այդիսիք նիւնելու պատճառով։ Թեև գերասանների ճշշտ հաշվառման ու պլանային բաշխելու հատուկ որդաններ գործություն չունելին, նայնորեն բաշխելու հատուկ որդաններ գործություն եր գրված խմբեր բայց թատրոնների վրա պարտականություն ելին ստեղծում։ Այս գաղանական կամ խոստումներով չհրապուրել գերասաններին, վտանգի չենթարկելով միուս թատրոնների գործուներությունը։ Յերեանի նոր կազմակորպությունը (չնայած դերասանների դիմումների առարականի տարափակին) իր բարոյական պարտքն եր համարում խուս տալ ուժերի անհավասարակիու զասավորումից։ Այս պայմաններն, անշուշտ, խոշոր բարգություն ելին ստեղծում։ Թատրոնի համար, սակայն ստանձնած պարտականությունն իր քաղաքական նշանակությունն ուներ։

Անուամենաւիլիվ, եւական դժվարությունն այդ չեր։

Խնդիրն այն եր, վոր Յերեանի Պետթատրոնը չեր կարող իր գուները լայն բացել ամեն մի գերասանի առաջ։ Նրա այս կարծիքը չկիտի բացատրել ինտելիգենտական — աղայական մհծամիտ վերաբերմունքով։ Նման կոմինտատորները չարաչար մոլորության մեջ կընկնեն։ Թատրոնն ուներ իր սկզբունքները, վորոնցից յերեանով ընտրություն եր կատարում ու լրացնում գերասանական կոլեկտիվը։

Վորպիսի՝ հանգամանք եր գրդում նրան զգուշորին վերաբերվելու գերասան հրավիրելու հարցին։

Հայ գերասանությունը գերազանցապես զաստիարակվել եր անհատապաշտական թատրոնում։ Թեպետև հայ հասարակական մաքի զարգացումն այս կամ այն չափով անդրադեմ և 19-րդ դարի վերջին և ներկա դարի առաջին տասնամյակների սուսա-

